

Luys Lnyu®



ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ  
ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ  
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Proj

# ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ  
ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՊԱՐՏՔԻ ԲԵՌԻ ՆՎԱՋԵՑՄԱՆ 2022-2026  
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	1
2. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ.....	2
3. ԹԻՐԱԽԱՅԻՆ (ԲԱՐՁՐ) ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՍՑԵՆԱՐ.....	4
4. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	8
5. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԲԵՌԻ ՆՎԱՋԵՑՄԱՆ 2022-2026ԹԹ. ԾՐԱԳԻՐԸ.....	11
6. ԱՄՓՈՓՈՒՄ.....	12

## 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, յուրաքանչյուր տարի կառավարությունը կազմում և հաստատում է առաջիկա երեք տարիների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (ՄԺԾԾ), որը հաստատվելուց հետո ուղարկվում է Ազգային ժողով և հրապարակվում: Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրն իրենից ներկայացնում է առաջիկա տարիներին կառավարության հարկաբյուջետային և ծախսային քաղաքականությունների հիմնական ուղղությունները, նպատակները և սկզբունքներն արտացոլող կարևոր փաստաթուղթ: ՄԺԾԾ-ի առաջին տարվա ցուցանիշները բնութագրում են առաջիկա տարվա պետական բյուջեի նախնական նախագիծը:

2021 թվականին կառավարությունը, բացի հիմնական ՄԺԾԾ փաստաթղթից, կազմել և հաստատել է կառավարության պարտքի բեռի նվազեցման 2022-2026 թվականների ծրագիրը: Դա պայմանավորված է նրանով, որ 2020թ. տարեվերջի դրությամբ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը գերազանցել է 60% սահմանային շեմը՝ կազմելով 63.5%: Ըստ հարկաբյուջետային կանոնների՝ սահմանային շեմը գերազանցելու հաջորդ տարում կառավարությունը պետք է Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնի պարտքի բեռի նվազեցման ծրագիրը: Սակայն այս փաստաթուղթը չի քննարկվել Ազգային ժողովում, այլ պարզապես հրապարակվել է՝ որպես հաստատված ծրագիր: Ավելին, ՄԺԾԾ հիմնական փաստաթուղթը կառավարության նիստում հաստատվել է առանց մակրոտնտեսական կանխատեսումները և հարկաբյուջետային քաղաքականությունը նկարագրող մասերի, իսկ մնացած հատվածները եղել են ոչ վերջնական: Հետևաբար, այս տարվա ՄԺԾԾ-ի հաստատումը և հրապարակումը կարելի է համարել ձևական գործընթաց, որը, այնուամենայնիվ, իրականացվել է օրենսդրական դրույթի խախտմամբ:

Հաշվի առնելով այն, որ 2021թ. համարվում է հետճգնաժամային տարի, կառավարության ՄԺԾԾ-ի վերլուծությունն ավելի է կարևորվում, քանի որ այդտեղ պետք է արտացոլվեն կառավարության սպասումները տնտեսական զարգացումների վերաբերյալ, ինչպես նաև առաջիկա տարիներին իրականացվելիք քաղաքականության միջոցառումները և դրանց սպասվող արդյունքները:

Հետևաբար, սույն վերլուծությունում ուսումնասիրվել են 2022-2024թթ. ՄԺԾԾ-ի և կառավարության պարտքի բեռի նվազեցման 2022-2026թթ. ծրագրի հիմքում դրված հիմնական մակրոտնտեսական կանխատեսումները և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունները, ինչը հնարավորություն կտա պատկերացում կազմել, թե ինչպիսի քաղաքականություն է

իրականացնելու կառավարությունը հետճգնաժամային ժամանակահատվածում տնտեսության արագ վերականգնումն ապահովելու համար:


## 2. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

ՄԺԾԾ-ի հիմքում դրված մակրոտնտեսական շրջանակի համաձայն, 2021թ. սպասվում է զգալիորեն ավելի բարձր տնտեսական աճ, քան սպասվում էր 2021թ. բյուջեի հիմքում դրված սցենարով, իսկ միջնաժամկետում տնտեսական աճը կանխատեսվում է միջին հաշվով շուրջ 4.3%-ի չափ: Ըստ կառավարության կանխատեսումների՝ 2021թ. տնտեսական աճը կկազմի 6.0%, որը հիմնականում պայմանավորված կլինի ծառայությունների աճով: Միջնաժամկետում տնտեսական աճը պայմանավորված կլինի հիմնականում ծառայությունների և արդյունաբերության ճյուղերի աճերով: Ամբողջական պահանջարկը նույնպես կաճի՝ պայմանավորված հիմնականում ներքին սպառողական և ներդրումային պահանջարկի աճերով:

Հատկանշական է, որ կառավարության կանխատեսումները զգալիորեն ցածր են 2021-2023թթ. ՄԺԾԾ-ի հիմքում դրված կանխատեսումներից, ինչը տրամաբանական է, քանի որ նախորդ տարվա ՄԺԾԾ-ի ընդունումից հետո տեղի են ունեցել մի շարք բացասական իրադարձություններ՝ հանգեցնելով տնտեսական անկման խորացմանը և ավելացնելով առկա անորոշությունները: Սակայն, ըստ կառավարության տված ազդակների, 2021թ. ՀՀ տնտեսությունը կվերականգնվի և միջնաժամկետ հորիզոնում կմոտենա իր երկարաժամկետ հավասարակշիռ մակարդակին: Մինչդեռ, հաշվի առնելով, որ 2020թ. տնտեսական անկումը կազմել է 7.4%, 2021թ. 6.0% աճը ոչ մի կերպ չի կարող համարվել վերականգնում, քանի որ մինչճգնաժամային ժամանակահատվածի՝ 2019-ի համեմատ իրական տնտեսական արդյունքը կլինի 1.8%-ով ավելի փոքր:

Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից ՀՀ տնտեսական աճի կանխատեսումները 2021թ. համար խիստ պահպանողական են, իսկ միջնաժամկետում՝ ավելի լավատեսական, քան կառավարության կանխատեսումները: Այսպես, 2021թ. համար ԱՄՀ-ն կանխատեսում է ընդամենը 1.0% տնտեսական աճ, իսկ 2022-2024 թվականներին՝ միջին հաշվով 4.5%: Պետք է նշել, որ չնայած ԱՄՀ կանխատեսումները բավական հին են՝ արվել են 2020թ. դեկտեմբերին, այդուհանդերձ ԱՄՀ-ն վերահաստատել է 2021թ. համար 1.0% տնտեսական աճի կանխատեսումը 2021թ. ապրիլին:

**Գծապատկեր 1. Տնտեսական աճի կանխատեսումների համեմատականը, %**



Տնտեսական ակտիվության և ներքին ու արտաքին պահանջարկների աստիճանական վերականգնման պայմաններում կանխատեսվում է, որ 2021թ. տեղի կունենա և՛ արտահանման, և՛ ներմուծման ծավալների աճ: Արտահանման աճը կանխատեսվում է շուրջ 18.2%, իսկ ներմուծման աճը՝ 16.3%: Ըստ կանխատեսումների արտահանման առաջանցիկ աճի տեմպը կպահպանվի նաև միջնաժամկետում:

**Աղյուսակ 1. 2022-2024թթ. ՄԺԾԾ հիմքում դրված հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները**

Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ	2018	2019	2020	2021	2022	2023	2024
	փաստ.	փաստ.	փաստ.	սպասում	ծրագիր	կանխ.	կանխ.
<b>Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ</b>	6,017.0	6,543.3	6,181.7	6,880.2	7,570.8	8,171.1	8,835.4
Տնտեսական աճ, %	5.2	7.6	-7.4	6.0	5.2	3.7	4.0
ՀՆԱ դեֆլյատորի աճ, %	2.8	1.0	2.0	5.0	4.6	4.0	4.0
Գնաճ (ժամանակաշրջանի վերջ), %	1.8	0.7	3.7	5.2	4.0	4.0	4.0
Գնաճ (միջին), %	2.5	1.4	1.2	5.3	4.1	4.0	4.0
<b>ՀՆԱ իրական աճն ըստ ճյուղերի ավելացված արժեքների, %</b>							
Արդյունաբերություն	4.9	11.9	-1.7	4.9	6.0	4.3	4.4
Գյուղատնտեսություն	-6.9	-5.8	-4.1	3.1	2.5	2.3	2.5
Շինարարություն	0.6	6.5	-6.7	5.5	6.3	3.2	5.2
Ծառայություններ	9.1	10.0	-9.7	7.0	5.3	3.9	4.0
Զուտ հարկեր	8.0	7.1	-10.0	6.5	5.3	3.8	3.9
<b>ՀՆԱ ծախսային բաղադրիչների իրական աճերը, %</b>							
Վերջնական սպառում	3.8	11.7	-10.1	7.7	6.0	3.8	3.6
Պետական	-3.0	12.9	15.2	9.2	-3.1	2.4	9.1

Մասնավոր	4.8	11.5	-13.9	7.4	8.0	4.1	2.5
Հիմնական միջոցներում ներդրումներ <sup>1</sup>	4.8	4.4	-8.6	5.8	8.2	4.5	5.4
Պետական	3.4	13.7	7.5	4.9	28.8	7.5	9.7
Մասնավոր	5.1	2.6	-12.0	6.0	3.0	3.5	4.0
Արտահանում	5.0	16.0	-32.4	7.0	12.7	9.0	7.1
Ներմուծում	13.3	11.6	-31.7	8.7	12.1	8.1	6.8
<b>Արտաքին հատված</b>							
Ընթացիկ հաշիվ, % ՀՆԱ-ում	-7.0	-7.4	-3.8	-2.1	-2.9	-3.5	-3.8
Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ, % ՀՆԱ-ում	-13.6	-13.2	-9.9	-10.3	-10.9	-11.0	-10.8
Արտահանման աճ, %	12.1	15.7	-34.2	18.2	15.0	12.0	10.4
Ներմուծման աճ, %	17.5	13.1	-33.2	16.3	15.2	11.1	9.2
Դրամական փոխանցումներ, % ՀՆԱ-ում	9.1	8.4	8.2	10.4	10.0	9.8	9.6

### 3. ԹԻՐԱԽԱՅԻՆ (ԲԱՐՁՐ) ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՍՅԵՆԱՐ

«ՀՀ 2022-2024թթ. ՄԺԾԾ-ում առանձին բաժնում ներկայացվել է թիրախային՝ բարձր տնտեսական աճի սցենար, որով թիրախավորվում է ապահովել առնվազն 7% տնտեսական աճ առաջիկա տարիներին: Ընդ որում, բարձր աճի սցենարը միայն ուղենշային է, և կառավարության ծախսերի ծրագիրը հիմնված չէ դրա վրա: Նման տարբերակով բարձր աճի սցենար էր ներկայացվել նաև 2020-2022թթ. ՄԺԾԾ-ում, որը կառավարության կողմից հաստատվել և հրապարակվել էր 2019 թվականին: Վերջինս, սակայն, մնաց սցենարի տեսքով միայն, քանի որ ո՛չ ծախսային ծրագրերը, ո՛չ էլ 2020թ. պետական բյուջեի նախագիծը հիմնված չէին դրա վրա: Ավելին, 2020թ. տեղի ունեցած շոկերն առավել շատ հեռացրին տնտեսությունն այդ ծրագրից: Ամենայն հավանականությամբ, նման ճակատագիր է սպասվում նաև այս տարվա բարձր աճի սցենարին՝ հաշվի առնելով դրա չափազանց լավատեսական լինելը և ՀՀ տնտեսությունում պահպանվող անորոշությունները:

Բարձր աճի սցենարով նախատեսվում է առաջիկա 5 տարիներին ապահովել միջին հաշվով շուրջ 7% տնտեսական աճ: Հաշվի առնելով համավարակի և Արցախյան պատերազմի հետևանքով ՀՀ ներուժային տնտեսական աճի նվազումը՝ այդ աճին հնարավոր է հասնել միայն համապատասխան քաղաքականությունների

<sup>1</sup> Կապիտալ ներդրումներում ներառված չէ պաշարների փոփոխությունը, ներկայացված են միայն հիմնական միջոցներում կատարված կապիտալ ներդրումները, քանի որ 2019-ից ՀՀ ՎԿ կողմից պաշարների փոփոխությունը հաշվառվում է որպես հաշվեկշռող գործոն, այլ կերպ ասած՝ վիճակագրական սխալները ներառվում են դրա մեջ:




և միջոցառումների միջոցով լրացուցիչ նշանակալի ջանքեր ներդնելու իրատեսական ճանապարհով: ՀՀ ՖՆ կողմից գնահատվում է, որ 2020թ. տեղի ունեցած բացասական երևույթներով և դրանց հետևանքներով պայմանավորված՝ ՀՀ տնտեսության ներուժային աճը նախկին 4-5% գնահատված միջակայքից նվազել է՝ հասնելով 3-4% միջակայքի:

Հետևաբար, ըստ ՀՀ ՖՆ գնահատականների, միջնաժամկետում (2022-2026թթ.) միջին հաշվով 7.0% տնտեսական աճի ապահովման համար անհրաժեշտ է ապահովել՝


- 1) հիմնական միջոցներում ներդրումների (և՛ մասնավոր, և՛ պետական) տարեկան միջին հաշվով 12.8% իրական աճ (տարեկան լրացուցիչ միջին հաշվով շուրջ 280 մլրդ դրամ), ինչը հիմնական միջոցների կշիռը ՀՆԱ-ում 2021-ի համեմատ 2026 թվականին կբարձրացնի շուրջ 5 տոկոսային կետով,
- 2) միջին հաշվով 5.3% ընդհանուր գործունային արտադրողականության տարեկան աճ,
- 3) արտահանման աճի տեմպերի արագացում ի հաշիվ ոչ հումքային բարձր ավելացված արժեք ստեղծող ապրանքատեսակների և արտահանելի ծառայությունների՝ ապահովելով արտահանման տարեկան միջին հաշվով 16.5% աճ, ինչը 2026-ին 2021-ի համեմատ կբարելավի արտահանման մակարդակը ՀՆԱ-ում 16.4%-ային կետով,
- 4) արդյունաբերության միջին տարեկան 8.3% իրական աճ:

Վերոհիշյալ դրույթները բավական լավատեսական են, և կարելի է դրանք դասել «լավ ցանկությունների» շարքին: Եթե դիտարկենք կառավարության նախորդ երեք տարիների գործունեության արդյունքում նշված ցուցանիշների զարգացումները, ապա պարզ կդառնա, որ դրանք ամենայն հավանականությամբ պարզապես ցուցանիշներ են «բարձր աճի» սցենար ունենալու համար: Մասնավորապես, Գծապատկեր 2-ում և 3-ում կարելի է տեսնել ներդրումների փաստացի տվյալները 2018-2020 թվականներին և կառավարության թիրախները: Ակնհայտ է, որ 2018-2020 թվականներին որևէ նկատելի արդյունք չի գրանցվել, ավելին, ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցությունը 2019թ. նվազել է 2018-ի համեմատ, իսկ 2020-ի փոքր աճը պայմանավորված է եղել ՀՆԱ-ի անկմամբ, որը միաժամանակ, փոքր է 2018թ. ցուցանիշից:

**Գծապարկեր 2. Անհրաժեշտ լրացուցիչ ներդրումներ հիմնական միջոցներում (մլրդ դրամ)**



**Գծապարկեր 3. Հիմնական միջոցներում ներդրումների կշիռը ՀՆԱ-ում (%)**



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ, գնահատականներ և կանխատեսումներ:

Նման պատկեր է նաև մյուս թիրախների մասով: Ապրանքների և ծառայությունների կշիռը ՀՆԱ-ում զգալի տեմպերով աճում էր 2016-2017 թվականներին՝ տարեկան շուրջ 4.0 տոկոսային կետով, իսկ 2018-2019թթ. աճի տեմպը զգալիորեն նվազել է՝ կազմելով համապատասխանաբար 1.1 և 2.0 տոկոսային կետ: Ներկա կառավարության գործունեության տարիներին նվազել է նաև արդյունաբերության աճի տեմպը՝ 2016-2017թթ. 9.7% միջին աճից 2018-2019թթ. միջին հաշվով կազմելով 8.4%: Հետևաբար, հաշվի առնելով կառավարության գործունեության արդյունքները, նշված թիրախները վստահություն չեն ներշնչում:

**Աղյուսակ 2. 2022-2024թթ. թիրախային (բարձր) տնտեսական աճի սցենարի հիմնական ցուցանիշները**

Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ	2020	2021	2022	2023	2024	2025	2026
	փաստ.	սպասում.	ծրագիր.	կանխ.	կանխ.	կանխ.	կանխ.
Տնտեսական աճ, %	-7.4	6.0	7.1	7.1	7.0	7.0	7.0
Ապրանքների և ծառայությունների արտահանում, % ՀՆԱ-ում	29.8	32.9	36.8	40.3	43.1	46.1	49.3
Պետական բյուջեի եկամուտներ, % ՀՆԱ-ում	22.4	22.4	23.4	23.9	24.7	25.3	25.9
Պետական բյուջեի ծախսերը, % ՀՆԱ-ում Այդ թվում՝	28.0	25.3	24.8	24.7	25.2	25.6	26.3
Ընթացիկ ծախսեր	24.3	22.4	20.5	20.3	20.4	20.3	20.2



Կապիտալ ծախսեր	3.7	2.9	4.3	4.4	4.8	5.3	6.1
Պետական բյուջեի պակասուրդը, % ՀՆԱ-ում	-5.4	-4.6	-3.1	-3.0	-2.8	-2.5	-2.5
Կառավարության պարտքը, % ՀՆԱ-ում	63.5	62.3	61.5	59.2	56.8	54.4	52.1

Հարկաբյուջետային քաղաքականության մասով, բարձր աճի սցենարում կառավարությունը սահմանել է հետևյալ թիրախները.

- Հարկաբյուջետային կոնսոլիդացիա. կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցության նվազեցում 60% շեմից մինչև 2026 թվականը:
- Ծախսերի կառուցվածքի բարելավում և տնտեսության պոտենցիալի բարձրացում. կապիտալ ծախսերի կշիռը ՀՆԱ-ում զգալի ընդլայնվում է՝ 2024թ. կազմելով շուրջ 4.0%, իսկ 2026 թվականին՝ 5-6%:

Վերոհիշյալ թիրախները, ինչպես և մակրոտնտեսական ցուցանիշների թիրախները, բավական լավատեսական են, սակայն դրանցից որոշակիորեն իրատեսական է պարտքի բեռի՝ ՀՆԱ-ի 60%-ից նվազեցման թիրախը, քանի որ շուրջ 2.3 տոկոսային կետով պարտքի բեռի նվազեցման փորձ ներկա կառավարությունն արդեն ունեցել է (2017-ի համեմատ 2019թ. կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը նվազել է 3.6 տոկոսային կետով):

Սակայն, ինչ վերաբերում է կապիտալ ծախսերի կշռի աճին, ապա դա առավել անիրատեսականն է, քանի որ վերջին երեք տարիներին կառավարության կապիտալ ծախսերը թերակատարվել են առնվազն 25-30 տոկոսով և նվազել են ՀՆԱ-ի նկատմամբ՝ 2017թ. 4.3%-ից 2019թ. հասնելով 2.9%-ի: Ավելին, մինչև այժմ չեն ախտորոշվել կապիտալ ծախսերի թերակատարման պատճառները, և որևէ գործուն միջոցառում չի ձեռնարկվել դա շտկելու համար:

Վերոհիշյալ թիրախների ապահովմանը զուգահեռ, կառավարությունը նախատեսում է ապահովել հարկեր/ՀՆԱ հարաբերակցության բարելավում՝ 2022-2026 թվականներին շուրջ 3.5 տոկոսային կետով, ինչի արդյունքում հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը 2020թ. 22.4%-ից 2026թ. կհասնի 25.9%-ի: Հարկային եկամուտների աճը նախատեսվում է ապահովել հարկային վարչարարության բարելավման միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ օրենսդրական փոփոխությունների կիրառմամբ:

Այսպիսով, թիրախային (բարձր) աճի սցենարը կարելի է գնահատել որպես ոչ իրատեսական, քանի որ կառավարության նախորդ տարիների գործունեության արդյունքները շեշտակիորեն գերազանցող թիրախների ապահովման համար որևէ հստակ միջոցառում նախատեսված չէ:

#### 4. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

COVID-19-ի համավարակի հետևանքով առաջացած իրավիճակը և Արցախյան պատերազմը հարկաբյուջետային կանոններով սահմանված կարգով համարվել են «բացառիկ դեպքեր», ինչի հիման վրա 2020 թվականին կառավարությունը շեղվել է հարկաբյուջետային կանոններից: Նույն գործոնների հետևանքներով պայմանավորված՝ «բացառիկ դեպքերի» կարգավորումները շարունակվելու են նաև 2021 թվականին: Հետևաբար, 2021թ. սպասվող հարկաբյուջետային ցուցանիշները կշեղվեն կանոններին համապատասխան հաշվարկված մեծություններից: Մասնավորապես, պետական բյուջեի պակասուրդը կգերազանցի կապիտալ ծախսերի մեծությունը՝ կազմելով 318.8 մլրդ դրամ, այն դեպքում երբ կապիտալ ծախսերը կկազմեն 197.2 մլրդ դրամ:


Հատկանշական է, որ կապիտալ ծախսերի սպասվող ցուցանիշը 2021թ. բյուջեով ծրագրավորվածից ցածր է շուրջ 19.2 մլրդ դրամով կամ 8.8%-ով, ինչը նշանակում է, որ կառավարությունն արդեն իսկ սպասում է որոշակի թերակատարում կապիտալ ծրագրերի մասով:

2021 թվականին շարունակում են իրականացվել հակաճգնաժամային միջոցառումները՝ ուղղված ինչպես կորոնավիրուսի, այնպես էլ Արցախյան պատերազմի բացասական հետևանքների մեղմմանը: Մասնավորապես, կորոնավիրուսի հետևանքների մեղմման նպատակով 2021 թվականի առաջին հինգ ամիսների ընթացքում կառավարությունն իրականացրել է շուրջ 15.6 մլրդ դրամի չափով ծախսեր, իսկ Արցախյան պատերազմի հետևանքներով պայմանավորված ծախսերը նույն ժամանակահատվածում կազմել են 33.3 մլրդ դրամ, որից սոցիալական աջակցությանն ուղղված մասը կազմել է 32.7 մլրդ դրամ: Սակայն, ինչպես կորոնավիրուսի, այնպես էլ Արցախյան պատերազմի հետևանքների մեղմման ուղղությամբ միջոցառումներ նախատեսված չեն 2022-2024 թվականներին: Այդպիսի միջոցառումներ նախատեսված չեն նաև 2021թ. պետական բյուջեով, ինչի հետևանքով ընթացիկ տարում իրականացված միջոցառումները կատարվում են վերաբաշխումների հաշվին: Այսինքն՝ կառավարությունը նախատեսում է շարունակել այդպիսի գործելաոճը նաև միջնաժամկետում:

Պետական բյուջեի հարկային եկամուտների կշիռը ՀՆԱ-ում 2021թ. կապահպանվի 2020թ. մակարդակում՝ կազմելով 22.4%, մինչդեռ 2021թ. բյուջեով նախատեսվել էր ապահովել 22.5% ցուցանիշը: 0.1 տոկոսային կետով դեպի ներքև հարկեր/ՀՆԱ ցուցանիշի կանխատեսման վերանայումը խոսում է այն մասին, որ ընթացիկ տարվա առաջին ամիսների հարկային հավաքագրումներն այդքան էլ լավ չեն իրականացվել, որքան խոսվում է կառավարության մակարդակով:


Միջնաժամկետում, սակայն, կառավարությունն ակնկալում է հարկեր/ՀՆԱ ցուցանիշի ագրեսիվ աճ՝ տարեկան միջին հաշվով շուրջ 0.4 տոկոսային կետով: Դրա հետ մեկտեղ, հարկեր/ՀՆԱ հարաբերակցության կանխատեսվող ցուցանիշները զգալիորեն ավելի ցածր են, քան նախատեսվել էր 2021-2023թթ. ՄԺԾ ծրագրով: Հետևաբար, եթե 2021-2023թթ. ՄԺԾ-ի ոչ իրատեսական կանխատեսումներն այս տարի վերանայվել են դեպի ներքև, ապա հնարավոր է 2022-2024թթ. ՄԺԾ-ի կանխատեսումները ևս վերանայվեն (իջեցվեն) հաջորդ տարի:

#### Գծապատկեր 4. Հարկային եկամուտների կանխատեսումների համեմատականը, % ՀՆԱ-ում




Միջնաժամկետում նախատեսվում է նվազեցնել բյուջեի ընթացիկ ծախսերի կշիռը ՀՆԱ-ում և մեծացնել կապիտալ ծախսերի կշիռը: Սակայն, ինչպես ընթացիկ, այնպես էլ ընդհանուր ծախսերի կշիռը ՀՆԱ-ում 2022-2024թթ. ՄԺԾ սցենարով լինելու է ավելի բարձր, քան 2021-2023թթ. ՄԺԾ-ով նախատեսված ցուցանիշները: Միաժամանակ, կապիտալ ծախսերի կշիռը ՀՆԱ-ում կանխատեսվում է ավելի ցածր մակարդակում, քան 2021-2023թթ. ՄԺԾ սցենարում: Դա առավել ակնառու է 2021թ. սպասվող ցուցանիշների համեմատականում, որտեղ կապիտալ ծախսեր/ՀՆԱ հարաբերակցության ժամանակագրությամբ ամենավերջին կանխատեսումը կազմում է 2.9%, մինչդեռ 2021թ. պետական բյուջեով նախատեսվել էր ապահովել 3.4%, իսկ 2021-2023թթ. ՄԺԾ-ով՝ 3.5%:

### Գծապատկեր 5. Պետական բյուջեի ծախսերի կանխատեսումների համեմատականը, % ՀՆԱ-ում



Միջնաժամկետում հարկաբյուջետային և պարտքային կայուն միջավայր ձևավորելու անհրաժեշտությունից ելնելով՝ ծրագրավորվում է սկզբնական փուլում իրականացնել զսպող, այնուհետև չեզոք հարկաբյուջետային քաղաքականություն: Միջնաժամկետ հորիզոնում թիրախավորվել է կառավարության պարտք/ՀՆԱ-ի աստիճանական նվազում՝ 2024 թվականին հասցնելով այն 56.8%-ի: 2022-2024 թվականներին, կառավարության պարտքի թիրախին հասնելու նպատակով նախատեսվում է իրականացնել սահուն հարկաբյուջետային կոնսոլիդացիա՝ նվազեցնելով պետական բյուջեի պակասուրդը և մինչև 2024 թվականը հասցնելով այն ՀՆԱ-ի նկատմամբ 1.9%-ին:

### Գծապատկեր 6. Պետական բյուջեի պակասուրդի կանխատեսումների համեմատականը, % ՀՆԱ-ում




## 5. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԲԵՌԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ 2022-2026ԹԹ. ԾՐԱԳԻՐԸ

ՀՀ հարկաբյուջետային կանոնների գործող համակարգը ձևավորվել է 2017թ. դեկտեմբերի 20-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված և 2018թ. հունվարի 27-ից ուժի մեջ մտած «ՀՀ բյուջետային համակարգի մասին» և «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարող օրենքների նախագծերով և ամբողջականացվել 2018թ. օգոստոսի 23-ին՝ ՀՀ կառավարության N 942-Ն որոշման ընդունմամբ: Համաձայն այդ կանոնների, երբ կառավարության պարտքը գերազանցում է ՀՆԱ-ի 60%-ը, կառավարությունն Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային ու տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովների քննարկմանն է ներկայացնում միջոցառումների ծրագիր՝ ՀՆԱ-ի նկատմամբ կառավարության պարտքի մակարդակի կանխատեսվող հետագիծն առաջիկա 5 տարիների ընթացքում 60 տոկոսից նվազեցնելու համար: 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության պարտքը գերազանցել է ՀՆԱ-ի 60%-ը՝ կազմելով 63.5%: Հետևաբար, հարկաբյուջետային կանոնների պահանջի կատարումն ապահովելու համար կառավարությունը 2022-2024թթ. ՄԺԾԾ փաստաթղթի հետ միասին հաստատել և Ազգային ժողով է ներկայացրել «ՀՀ կառավարության պարտքի բերի նվազեցման 2022-2026թթ. ծրագիրը»: Ծրագիրը, սակայն, Ազգային ժողովի վերոհիշյալ հանձնաժողովներում չի քննարկվել, ինչի արդյունքում խախտվել է օրենքով սահմանված կարգը:

Ծրագրով նախատեսվում է իրականացնել հարկաբյուջետային կոնսոլիդացիա՝ մինչև 2026թ. կառավարության պարտքը նվազեցնելով ՀՆԱ-ի 60%-ից: Հարկաբյուջետային կոնսոլիդացիան նախատեսվում է իրականացնել հիմնականում հարկային եկամուտների՝ ՀՆԱ-ի նկատմամբ կշռի մեծացման ճանապարհով՝ ծախսերի կշիռը ՀՆԱ-ում պահպանելով գրեթե նույն մակարդակում:

Միաժամանակ, ծախսային մասում նախատեսվում է ՀՆԱ-ի մեջ աստիճանաբար ավելացնել երկարաժամկետ տնտեսական աճ ստեղծող կապիտալ ծախսերը և նվազեցնել ընթացիկ ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը:

**Գծապատկեր 7. Կառավարության պարտքը, % ՀՆԱ-ում**



Գծապատկեր 7-ում ներկայացված են կառավարության պարտքի հետագծերը՝ ըստ տարբեր ծրագրերի: Ըստ 2022-2026թթ. պարտքի բեռի նվազեցման ծրագրի նախատեսվում է աստիճանաբար նվազեցնել պարտքի բեռը՝ հասցնելով այն ՀՆԱ-ի 53.8%-ին 2026 թվականին: Դրան հասնելու համար վերոհիշյալ հարկային և ծախսային քաղաքականությունների տրամաբանության ներքո նախատեսվում է նվազեցնել բյուջեի պակասուրդը՝ 2024-2026 թվականներին հասցնելով այն ՀՆԱ-ի 1.9%-ին:

Սակայն, ինչպես բարձր աճի սցենարում, այնպես էլ պարտքի բեռի նվազեցման ծրագրում, հիմնական թիրախներին հասնելու համար նախատեսվող միջոցառումները նշված չեն: Մասնավորապես, չի նշվում, թե ինչ միջոցառումների հաշվին է նախատեսվում ավելացնել հարկային եկամուտները, կամ ինչ կապիտալ ծախսեր են նախատեսվում իրականացվել տնտեսական աճի արագացման նպատակով: Այս բացթողումները նվազեցնում են ծրագրի իրատեսականությունը և վստահությունը դրա արդյունավետ իրականացման հարցում:

**6. ԱՄՓՈՓՈՒՄ**

Ամփոփելով կարող ենք նշել, որ 2022-2024 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը կրում է իներցիոն բնույթ այն առումով, որ շարունակվելու է կառավարության վերջին տարիների գործելաոճը՝ կապված իրավիճակին ոչ համապատասխան պլանավորման, հստակ միջոցառումների բացակայության և անհիմն լավատեսության հետ: Նշված մտահոգությունները, մասնավորապես, ձևակերպված են հետևյալ կետերում.

**1. ՄԺԾԾ-ն կառավարության նիստում հաստատվեց ոչ ամբողջական տեսքով:** ՄԺԾԾ-ն կառավարության նիստում հաստատվել է առանց



մակրոտնտեսական կանխատեսումները և հարկաբյուջետային քաղաքականությունը նկարագրող մասերի: Այսինքն՝ մակրոտնտեսական սցենարը և հարկաբյուջետային ցուցանիշները, որոնք հիմք են հանդիսանում ծախսային ծրագրերի կազմման համար, բացակայում էին, ինչի պարագայում անհասկանալի է, թե ինչ տրամաբանությամբ է փաստաթուղթը հաստատվել կառավարության կողմից: Մնացած՝ ծախսային քաղաքականությունը նկարագրող հատվածները հաստատման պահին եղել են ոչ վերջնական: Նշվածները հետագայում լրացվել են, և հուլիսի 20-ից հետո ՄԺԾԾ-ն հրապարակվել է ամբողջական տեսքով: Այս ամենը ՄԺԾԾ-ի հաստատումը և հրապարակումը դարձնում են ձևական գործընթաց:

**2. Ըստ կառավարության կանխատեսումների՝ 2021թ. սպասվում է ընդամենը 6.0% տնտեսական աճ:** Հաշվի առնելով, որ 2020թ. տնտեսական անկումը կազմել է 7.4%, 2021թ. 6.0% աճը ոչ մի կերպ չի կարող համարվել տնտեսության վերականգնում, քանի որ մինչճգնաժամային ժամանակահատվածի՝ 2019-ի համեմատ իրական տնտեսական արդյունքը կլինի 1.8%-ով պակաս: Սա այն դեպքում, երբ կառավարության անդամները, մասնավորապես ՀՀ էկոնոմիկայի նախարարը, բազմիցս հայտարարել են 2021թ. իրենց կողմից սպասվող երկնիշ տնտեսական աճի մասին:

**3. ՄԺԾԾ փաստաթղթում ներկայացված թիրախային (բարձր) տնտեսական աճի սցենարն ամենայն հավանականությամբ այդպես էլ կմնա թղթի վրա:** ՄԺԾԾ-ի առանձին բաժնում ներկայացված թիրախային (բարձր) տնտեսական աճի սցենարը կազմված է չափազանց լավատեսական թիրախների (ներդրումների կտրուկ աճ, արտահանման կշռի բարձրացում, արտադրողականության աճ և այլն) և դրանց ապահովման ենթադրությամբ, սակայն որևէ միջոցառում, որը կնպաստի դրանց իրագործմանը՝ չի ներկայացվում: Այդ պարագայում, ստացվում է, որ բարձր աճի սցենարը կազմվել և արտացոլվել է ՄԺԾԾ-ում «ցուցադրական» նպատակով՝ չունենալով որևէ կապ կառավարության եկամտային և ծախսային քաղաքականությունների հետ:

**4. Պետական բյուջեի եկամուտների բարելավման տեմպը չափազանց լավատեսական է:** 2022-2024 թվականներին նախատեսվել է հարկային եկամուտների շուրջ 0.4 տոկոսային կետով միջին տարեկան բարելավում, այն դեպքում, երբ պատմական բարելավման տեմպը եղել է 0.2 տոկոսային կետ: Ընդ որում, 2021թ. հարկեր/ՀՆԱ հարաբերակցության կանխատեսումը վերանայվել է դեպի ներքև՝ բացահայտելով ընթացիկ տարվա հարկային եկամուտների հավաքագրումների ոչ բարձր մակարդակը: Հետևաբար, հարկային եկամուտների բարելավման նման տեմպն անիրատեսական է, մանավանդ այն պարագայում, երբ ՄԺԾԾ-ում ներկայացված չէ որևէ միջոցառում, որը կնպաստի հարկեր/ՀՆԱ հարաբերակցության այդ չափով բարելավմանը, բացի անորոշ ձևակերպված

վարչարարության բարելավումից: Անիրատեսական հարկային եկամուտների կանխատեսումը չափազանց վտանգավոր է, քանի որ դրանց հիման վրա կարող են նախատեսվել ծախսային պարտավորություններ, որոնք հարկային եկամուտների՝ սպասվածից ցածր լինելու պարագայում, պետք է ֆինանսավորվեն պարտքի հաշվին՝ վտանգելով հարկաբյուջետային կայունությունը:

**5. Կապիտալ ծախսերի թերակատարում սպասվում է նաև 2021 թվականին:** ՄԺԾԾ հիմքում դրված կանխատեսումներում կառավարությունը նվազեցրել է կապիտալ ծախսերի սպասումը 2021 թվականի համար, ինչը նշանակում է, որ 2021-ին, ինչպես նախորդ երեք տարիներին, կապիտալ ծախսերը ևս թերակատարվելու են: Ավելին, կառավարությունը նաև նվազեցրել է միջնաժամկետում կապիտալ ծախսեր/ՀՆԱ հարաբերակցության կանխատեսումները, որոնք թեև աճման միտում ունեն, սակայն միջին հաշվով շուրջ 0.5-1.0 տոկոսային կետով զիջում են 2021-2023թթ. ՄԺԾԾ-ով նախատեսված ցուցանիշներին:

**6. Կառավարության պարտքի բեռի նվազեցման 2022-2026թթ. ծրագիրը չի քննարկվել Ազգային ժողովում:** Վերջինիս քննարկումն օրենսդրական պահանջ է՝ սահմանված «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքով: Սա անհասկանալի է, քանի որ Ազգային ժողովում պարտքի նվազեցման ծրագրի քննարկումը լավ հնարավորություն է կառավարության համար, որպեսզի հանրությանը դրական ազդակներ հղի պարտքի սպասվող հետագծի, դրա կայունության և կառավարելիության վերաբերյալ: Սակայն, քննարկման բացակայությունը հակառակ տրամադրություններ կարող է ստեղծել հանրության շրջանում՝ կասկածներ առաջացնելով պարտքի կայունության և կառավարելիության առնչությամբ:

---

**«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: